ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան *երկու հազար քսանչորս թվականի հուլիսի երեսունմեկին*

«**Տելեկոմ** Արմենիա» **բաց** բաժնետիրական **ը**նկերությունը, այսուհետ՝ «Վարձատու», (իրավաբանական հասցե՝ քաղաք Երևան, Ազատության պողոտա 24/1, իրավաբանական անձի պետական գրանցման համար՝ 264.130.1310465), ի դեմս գլխավոր տնօրեն՝ Հայկ Եսայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, ում անունից 18.07.2024թ. տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս ՀՀ քաղաքացի Ռոբերտ Ռազմիկի Մանվելյանը (ծնված՝ 26.07.1978թ., նույնականացման քարտ՝ 010589513, տրված՝ 12.09.2018թ., 006-ի կողմից, բնակության հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, Գյուրջյան փ., 11/3 շ., 62 բն.), մի կողմից և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, այսուհետ՝ «Վարձակալ» (գրանցման համար՝ 273.184.1025876, ՀՎՀՀ՝ 02678934, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյուն 15), ի դեմս տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանի, ում անունից 21.06.2024թ. 102/06-2024 տրված լիազորագրի հիման վրա հանդես է գալիս Հակոբ Իգիթի Թամազյանը (ծնված՝ 12.03.1972թ., նույնականացման քարտի համար՝ 0132998057, տրված՝ 21.10.2022թ., 019-ի կողմից, բնակության հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, ք Աբովյան, 4-րդ միկրոշրջան, բն. 31), մյուս կողմից և Վարչապետի աշխատակազմը, այսուհետ՝ «Վճարող», ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության վարչատնտեսական բաժնի մատակարար-գործակալ՝ Հարություն Ռազմիկի Մկրտումյանի (ծնված՝ 06.05.1970թ., նույնականացման քարտ՝ 009432626, տրված՝ 24.05.2018թ., 008-ի կողմից, ՀԾՀ՝ 1605700096, հաշվառման հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու փողոց, շ. 35, բն. 27), ով գործում է Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչի կողմից 2024թ. հունիսի 4-ին տրված լիազորագրի հիման վրա, երրորդ կողմից, այսուհետ միասին հիշատակման ժամանակ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը, այսուհետ՝ «Պայմանագիր», հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել իրեն սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, քաղաք Աբովյան, Բարեկամության հրապարակ թիվ 2 հասցեում գտնվող ավտոմատ հեռախոսակայանի շենքի 2-րդ հարկի տարածքից՝ 99.5 (իննսունինն ամբողջ հինգ տասնորդական) քառ. մետր ընդհանուր մակերեսով թիվ 32, 33, 34 և 35 (երեսուներկու, երեսուներեք, երեսունչորս և երեսունհինգ) տարածքները, այսուհետ՝ «Օբյեկտ», համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող հատակագծի: Օբյեկտն օգտագործվելու է Վարձակալի Կոտայքի տարածքային բաժնի ընթացիկ գործունեության իրականացման նպատակով:

1.2. Վարձատուն վարձակալության հանձնվող Օբյեկտի սեփականատերն է, ինչը հավաստվում է անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման թիվ 11112021-07-0002 վկայականով, տրված՝ 2021 թվականի նոյեմբերի 11-ին:

1.3. *Վարձատուն երաշխավորում է, որ Օբյեկտը վաճառված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված չէ, վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, այն ծանրաբեռնված է «Ամերիաբանկ» ՓԲԸ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի գրավի իրավունքով՝ համաձայն ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից 26.07.2024թ. տրված թիվ*

ՍՏ-26072024-07-0577, գաղտնաբառ՝ DB0352PV8LXB անշարժ գույքի միավորի և դրա նկատմամբ գրանցված իրավունքների և սահմանափակումների վերաբերյալ միասնական տեղեկանքի:

1.4. «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն /այսուհետ՝ Ամերիաբանկ/, 07.07.2022թ. կնքված Անշարժ Գույքի Գրավի (Հիփոթեքի) պայմանագրի համաձայն հանդիսանալով գրավառու (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի հետ համատեղ՝ համիրավ գրավառուներ, այսուհետ Ամերիաբանկի հետ միասին՝ Գրավառուներ) և Ապահովման Միջոցի Գործակալ (որը նույն պայմանագրի 2.5 կետի ուժով իրավասու է հանդես գալ բոլոր գրավառուների անունից) չի առարկում, որպեսզի Գրավառուների օգտին գրավադրված «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հրապարակ թիվ 2 (երկու) հասցեում գտնվող Ավտոմատ հեռախոսակայանի շենքի 2-րդ հարկից 99,5 (իննսունինն ամբողջ հինգ տասնորդական) քմ. մակերեսով տարածքը տրվի վարձակալության ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին (գրանցման համար՝ 273.184.1025876, ՀՎՀՀ՝ 02678934) պայմանով, որ վարձակալության պայմանագիրը համապատասխանի Անշարժ Գույքի Գրավի (Հիփոթեքի) պայմանագրի պայմաններին, մասնավորապես, կնքվելիք վարձակալության պայմանագրում պարտադիր ամրագրվեն Անշարժ Գույքի Գրավի (Հիփոթեքի) պայմանագրի 4.9.3. կետով նախատեսված դրույթները և պահպանվեն ներքոնշյալ բոլոր պայմանները.

1.4.1. վարձակալության հանձնվող գույքը ծանրաբեռնված է «Ամերիաբանկ» ՓԲԸ, Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի և Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի գրավի իրավունքով՝ ի ապահովումն՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ (Վարկառու)՝ Ընդհանուր պայմանների մասին համաձայնագրով և դրա հիման վրա կնքված և ապագայում կնքվելիք վարկային և այլ պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման,

1.4.2. Անշարժ Գույքի նկատմամբ Գրավառուների գրավի իրավունքը, ներառյալ՝ գույքը երրորդ անձանց իրավունքներից ազատ վիճակում բռնագանձման կարգով իրացնելու իրավունքը, գերակայելու է Անշարժ գույքի նկատմամբ Վարձակալի տիրապետման և օգտագործման իրավունքների նկատմամբ,

1.4.3. Վարձատուն պարտավորվում է Անշարժ Գույքի՝ որպես գրավի առարկայի բռնագանձման ծանուցումը ստանալուց հետո անհապաղ, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան այն ուղարկված լինելու փաստին տեղյակ լինելուց՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ծանուցել Վարձակալին: Անշարժ Գույքի, որպես գրավի առարկա դատական կարգով բռնագանձվելու դեպքում՝ Վարձատուն պարտավոր է ծանուցել Վարձակալին բռնագանձում տարածելու մասին վճիռն ուժի մեջ մտնելու վերաբերյալ՝ ուժի մեջ մտնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում:

1.4.4. Անշարժ Գույքի՝ որպես գրավի առարկայի բռնագանձման դեպքում վարձակալության պայմանագրի գործողությունը և Անշարժ Գույքի նկատմամբ վարձակալության պայմանագրից բխող վարձակալության (տիրապետման և օգտագործման) իրավունքները դադարում են՝

1.4.4.1 արտադատական բռնագանձման դեպքում՝ բռնագանձման ծանուցում ուղարկելուն հաջորդող 30-րդ օրը,

1.4.4.2. դատական կարգով բռնագանձվելու դեպքում արբիտրաժային տրիբունալի կամ դատարանի կողմից բռնագանձում տարածելու վճիռն ուժի մեջ մտնելու օրը,

1.4.4.3. ամեն դեպքում նաև՝ գրավի բռնագանձման կարգով Վարձատուի սեփականության իրավունքի դադարելու պահից,

1.4.4.4. Անշարժ Գույքի նկատմամբ Վարձակալի վարձակալության իրավունքը սույն կետի համաձայն դադարելու պահից 15 օրվա ընթացքում Վարձակալը պարտավոր է վերջնական ազատել Անշարժ Գույքը (այդ թվում՝ ցանկացած գույքից և իր ներկայացուցիչների ներկայությունից):

Սույն կետի ուժով վարձակալության հանձնվող գույքի նկատմամբ Վարձակալի ունեցած իրավունքների դադարումը գրանցելու համար Կողմերի համաձայնությունը համարվում է տրված:

<u>Պայմանագրի սույն կետը չի կարող փոփոխվել կամ հանվել առանց «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի գրավոր համաձայնության</u>:

1.4.5. Վարձակալության պայմանագրի պատճենը պետք է տրամադրվի «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ որպես Անշարժ Գույքի Գրավի (Հիփոթեքի) պայմանագրի համաձայն հանդես եկող Ապահովման Միջոցի Գործակալի:»

1.5. Սույնով Վարձակալը տալիս է Վարձատուին իր անվերապահ և անհետկանչելի համաձայնությունը՝ Վարձատուի կողմից Օբյեկտը գրավ (ցանկացած եղանակով, այդ թվում՝ հաջորդող գրավ) դնելու համար, ինչպես նաև պարտավորվում է Վարձատուի առաջին իսկ պահանջով և հայցվող ձևաչափով (խմբագրությամբ) անհապաղ տրամադրել Վարձակալի վերը նշված համաձայնությունը հավաստող գրավոր հաստատում:
1.6. Կողմերը հաստատում են, որ սույն պայմանագրի 1.1 կետում նշված Օբյեկտը 2024 թվականի հունիսի 1-ի դրությամբ հանձնված է Վարձակալին:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՈՒՆՆԵՐԸ

2.1 Վարձատուն իրավունք ունի՝
2.1.1 պահանջել Վարձակալից՝ Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին համապատասխան.
2.1.2 եթե Վարձակալը Օբյեկտից օգտվում է պայմանագրի պայմաններին անհամապատասխան, պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.
2.1.3 արգելել Վարձակալին վարձակալած Օբյեկտը հանձնել այլ անձանց ենթավարձակալության.
2.1.4 պարբերաբար այցելել Օբյեկտը՝ նախօրոք յուրաքանչյուր այցի օրը և ժամը համաձայնեցնելով Վարձակալի հետ:

2.2 Վարձատուն պարտավոր է՝
2.2.1 որևէ կերպ չմիջամտել և արգելքներ չստեղծել սույն պայմանագրով սահմանված՝ Վարձակալի օրինական գործունեության իրականացմանը.
2.2.2 Վարձակալին նախազգուշացնել վարձակալության հանձնված Օբյեկտի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների /գրավի իրավունք, սերվիտուտ և այլն/ մասին.

2.3 Վարձակալն իրավունք ունի՝
2.3.1 պահանջել Վարձատուից սույն պայմանագրի պայմաններին համապատասխան իրեն տրամադրել Օբյեկտը.
2.3.2 Վարձատուից պահանջելու վերացնել վերջինիս կողմից ստեղծված խոչընդոտները, որոնք խանգարում են Վարձակալին օգտագործելու վարձակալած տարածքը:

2.4 Վարձակալը պարտավոր է՝
2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին համապատասխան.
2.4.2. առանց Վարձատուի գրավոր համաձայնության Օբյեկտում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանել վերանախագծումներ և վերապլանավորումներ: Վարձակալի կողմից Օբյեկտի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Վարձակալի հաշվին.
2.4.3. Վարձակալած Օբյեկտի տարածքում պահպանել սանիտարահամաճարակային կայանների, պետական հրշեջ վերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև այն բոլոր կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալած Օբյեկտի նկատմամբ.
2.4.4. Օբյեկտում գործունեություն իրականացնելիս չխախտել այլ անձանց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև վնաս չպատճառել Վարձատուի գույքին.
2.4.5. Օբյեկտն ազատելիս այն պատշաճ վիճակում հանձնել Վարձատուին հանձնման-ընդունման ակտով՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.
2.4.6 խստորեն պահպանել փողերի լվացման դեմ ու կոռուպցիայի հակազդման ոլորտին վերաբերող ՀՀ Օրենսդրության պահանջները:

2.5. Վճարողը պարտավոր է՝

2.5.1. ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վարձավճարը.

2.5.2. վարձակալության ընթացքում ժամանակին կատարել Օբյեկտի կոմունալ վճարները՝ (էլեկտրաէներգիա, ջուր և այլն) հաշվիչ սարքերի ցուցմունքների համաձայն.

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ և ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3.1. Պայմանագրի ամսական վարձավճարը կազմում է 95 000 (իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, առանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված ԱԱՀ-ի:

3.2. Քանի որ Օբյեկտը տրամադրվել է Վարձակալին 2024 թ. հունիսի 1-ին, Կողմերը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441 հոդվածի 2-րդ կետով պայմանավորվում են, որ Պայմանագրի 3.1 կետով սահմանված ամսական վարձավճարը կհաշվարկվի՝ սկսած 01.06.2024թ. /երկու հազար քսանչորս թվականի հունիսի մեկից/:

3.3. Վարձատուն պարտավոր է մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 5-ը Վճարողին ներկայացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված հաշիվ՝ հաշվետու ամսվա վերջին օրվա ամսաթվով:

3.4. Վճարողը 3.1 կետով սահմանված գումարը Վարձատուի հաշվին է փոխանցում 3.3 կետում սահմանված հաշիվը հաստատելուց հետո՝ տասն օրվա ընթացքում:

3.5. Ոչ լրիվ ամսվա համար վարձակալության վճարի չափը հաշվարկվում է սույն Պայմանագրի 3.1. կետում նշված վարձակալության վճարը տվյալ ամսվա օրերի քանակի վրա բաժանելու և Օբյեկտի փաստացի տիրապետման օրերի քանակով բազմապատկելու միջոցով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ՀՀ կադաստրի կոմիտեում սույն Պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման օրվանից և գործում է մինչև 01.06.2026թ. /երկու հազար քսանվեց թվականի հունիսի մեկը/:

4.2. Սույն Պայմանագրի պայմանները տարածվում են մինչ սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ՝ սկսած 01.06.2024թ. /երկու հազար քսանչորս թվականի հունիսի մեկից/:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Վճարումների ժամկետները խախտելու դեպքում Վարձատուն ուշացրած յուրաքանչյուր բանկային օրվա համար կարող է Վարձակալի նկատմամբ կիրառել տույժ՝ պայմանագրի 3.1 կետում սահմանված գումարի 0,1%-ի չափով, որը չի կարող գերազանցել ամսական վարձավճարի 10%-ը:

5.2. Տույժի վճարումը Կողմերին չի ազատում պայմանագրով նրանց ստանձնած պարտավորությունների կատարումից:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե՝

ա. Վարձակալն Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների բազմակի խախտումներով,
բ) Վճարողը սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը խախտել է երկու անգամից ավելի,
6.2. Վարձակալի պահանջով սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝
եթե Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին համապատասխան օգտագործելու համար:
6.3. Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ պայմանագրի լուծման մասին մյուս Կողմին գրավոր ծանուցելուց երեք ամիս հետո: «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ սույն պայմանագիրը ծանուցման մեջ նշված օրվանից կհամարվի լուծված:
6.4. Պայմանագիրը կարող է լուծվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ / ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, հրդեհը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է երեք ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դադարեցնել պայմանագիրը՝ այդ մասին նախապես գրավոր տեղյակ պահելով մյուս Կողմին:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

Կողմերը պայմանավորվում են, որ սույն Պայմանագրի դրույթները և Կողմերի միմյանցից ստացվող ամբողջ տեղեկատվությունը ինչպես նաև՝ "գաղտնի" նշված կամ միայն ստացողի համար նախատեսված տեղեկատվությունը համարվում է գաղտնի (հետագայում՝ "Գաղտնի տեղեկատվություն") և պայմանավորվում են չբացահայտել, չտարածել, չտպագրել կամ այլ կերպ նման տեղեկատվությունը չտրամադրել որևէ երրորդ կողմի՝ նախապես չստանալով մյուս Կողմի գրավոր թույլտվությունը՝ բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Պայմանագրի ժամկետի ավարտից հետո սույն կետը պահպանում է իր ուժը և գործում է երեք տարի պայմանագրի դադարեցման կամ լուծման օրվանից սկսած:

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1 ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 468 հոդվածի 1-ին մասին համապատասխան, Կողմերը սահմանում են, որ սույն Պայմանագրի փոփոխման կամ լուծման ցանկացած համաձայնություն կնքվում է հասարակ գրավոր ձևով՝ առանց նոտարական վավերացման:
9.2. Վարձակալի կողմից Օբյեկտում կատարված անբաժանելի բարելավումները, պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում կամ վարձակալման ժամկետի ավարտից հետո դառնում են Վարձատուի սեփականությունը և փոխհատուցման ենթակա չեն:

9.3. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9.4. Կողմերի միջև սույն պայմանագրի շրջանակներում ծագած վեճերը և (կամ) տարաձայնությունները հնարավորության սահմաններում պետք է լուծվեն Կողմերի (նրանց ներկայացուցիչների) միջև բանակցությունների միջոցով: Բանակցությունների ընթացքում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ծագած վեճերը և (կամ) տարաձայնությունները լուծվում են Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

9.5. Ստորագրելով սույն Պայմանագիրը Վարձակալը համաձայնվում է Վարձատուի «Կոմպլայենսի դրույթ»-ներում (կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ https://telecomarmenia.am/BP_CP_ARM) ներառված բոլոր կետերի հետ, որոնք հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.6. Սույն պայմանագրից ծագող իրավունքներն ենթակա են պետական գրանցման սույն պայմանագրի նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում:

9.7. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 4 /չորս/ հավասարազոր օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ, մեկ օրինակ էլ պահվում է նոտարական գրասենյակում, իսկ պայմանագրի պատճենը էլեկտրոնային տարբերակով ներկայացվում է ՀՀ կադաստրի կոմիտե:

10. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Վարձատու՝

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ազատության պ. 24/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570004866030100
ՀՎՀՀ 02500052
Գլխավոր տնօրեն՝
Հայկ Եսայան

Վարձակալ՝

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Լիազորված անձ՝ Հակոբ Իգիթի Թամազյան
նույնականացման քարտ՝ 0132998057, տրված՝
21.10.2022թ., 019-ի կողմից

Վճարող՝

Վարչապետի աշխատակազմ
ՀՎՀՀ՝ 02505554
հ/հ՝ 900011024040

Լիազորված անձ՝ Հարություն Ռազմիկի Մկրտումյան
նույնականացման քարտ՝ 009432626, տրված՝ 24052018թ
008-ի կողմից
հասցե՝ ք. Երևան, Ռաֆֆու փ., շ. 35, բն. 27

ՇԵՆՔԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ

1։200
(մասշտաբը)



2414080

Վկայականի համարը

Կատարող ____________ (ստորագրությունը)

Նոտարական ակտի կոդ: 460-20240731-37-8188218
Նոտարական ակտի գաղտնագիր: S1OYQE

Երկու հազար քսանչորս թվականի հուլիսի երեսունմեկ

սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ԵՐԵՎԱՆ նոտարական տարածքի նոտար՝ ԱՍՏՂԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՍ կողմից:

Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ՝ ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ իրավունքը ստուգված են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համապատասխան, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ ----2164----------ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Աստղինե Գրիշայի Միքայելյան